

Կալիումի քլորիդ



Կալիումի քլորիդը (KCl 50-60%-ոց) հիմնական և առավել տարածված կալիումական պարարտանյութն է: Կալիումի քլորիդը գրանուլացված, սպիտակամոխրագույն և կարմրագորշ երանգով նյութ է: Կալիումը, քիմիապես մաքուր այդ աղի մեջ, վերահաշված օքսիդով, կազմում է 63.2%, իսկ պարարտանյութի մեջ, որպես տեխնիկական նյութի, այդ թիվը տատանվում է 50-60 %-ի սահմաններում, կախված նյութի մաքրության աստիճանից: Կալիումի քլորիդը մեծ հիգրոսկոպիկական հատկություն չունի (0.1-0.5%), բայց երկար պահելու ընթացքում, մանավանդ, երբ հաստ շերտով ու խոնավ պայմաններում է մնում, կոշտանում և պնդանում է:

Կալիումի քլորիդը նպաստում է.

- մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը,
- բույսերի ցրտադիմացկունության, երաշտադիմացկունության, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկունության բարձրացմանը,
- բուսաբուծական մթերքների որակական ցուցանիշների բարձրացմանը և երկարատև պահպանմանը,
- հատիկաըղեղենների արմատների վրա պալարիկների ձևավորմանը,
- հողից բույսի կողմից կլանվող նիտրատների քանակի նվազմանը:

Կարելի է օգտագործել բոլոր ազոտական, ֆոսֆորական և այլ պարարտանյութերի հետ համատեղ, խառնելով անմիջապես հող մտցնելուց առաջ:

Այս պարարտանյութը անհրաժեշտ է հող մտցնել աշնանը, հիմնական հերկի տակ, և կարելի է կիրառել բոլոր մշակաբույսերի համար: Սակայն առավել պահանջկոտ են կալիումի նկատմամբ գարին, արևածաղիկը, կարտոֆիլը, շաքարի ճակնդեղը, եգիպտացորեն, հնդկացորենը և բանջարեղենի որոշ տեսակներ:

Պարարտացման նորման կախված է բույսերի կենսաբանական առանձնահատկություններից, հողի բերրիությունից և այլն: Երաշխավորվում է կալիումը օգտագործել 150-200 կգ/հա նորմայով, որպես հիմնական պարարտացում: